**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**
**ԵՎ**
**ՏԵՂԵԿԱՆՔ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի հուլիսի 22-ին և հուլիսի 23-ին:

Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 96,400,000 եվրո, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրվող ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով: Ծրագրի նպատակներն են բարելավել կլիմայակայուն ենթակառուցվածքների հասանելիությունը և ավելացնել Ծրագրում ընդգրկված կլաստերների տեղական տնտեսություններում զբոսաշրջության ներդրումը:

**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգը** նախատեսված է դրա 4-րդ՝ «Ուժի մեջ մտնելը, դադարեցումը» հոդվածով.

*«Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները բաղկացած են հետեւյալից.*

*ա) Ենթահամաձայնագիրը դրա Կողմերի միջեւ կնքվել է Բանկի համար ընդունելի ձեւով.*

*բ) Վարկառուն ստեղծել է Ծրագրի ղեկավարման կոմիտե՝ Բանկի համար ընդունելի լիազորությունների շրջանակով եւ կազմով"*

*գ) Վարկառուն ստեղծել է Ծրագրի աշխատանքային խումբ՝ Բանկի համար ընդունելի լիազորությունների շրջանակով եւ կազմով"*

*դ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել է Ծրագրի գործառնական ձեռնարկը, որը ներառում է Ֆինանսական կառավարման ձեռնարկը, Կարողությունների զարգացման պլանը եւ Սեռական շահագործման կամ բռնության եւ սեռական ոտնձգությունների կանխարգելման գործողությունների ծրագիրը՝ բոլորը Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով"*

*ե) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել, այնուհետեւ*

*հանրայնացրել է Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով"*

*զ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հասփափել, այնուհեփեւ հանրայնացրել է Աշխափանքային ռեսուրսների կառավարման ընթացակարգերը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով"*

*է) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հասփափել, այնուհեփեւ հանրայնացրել է Տարաբնակեցման շրջանակը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով"*

*ը) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հասփափել, այնուհեփեւ հանրայնացրել է Շահագրգիռ կողմերի հեփ փոխգործակցության պլանը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով.*

*թ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը ներդրել է Հեփադարձ կապի ապահովման եւ բողոքների արձագանքման մեխանիզմ՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով:*

*4.02. Ուժի մեջ մփնելու վերջնաժամկեփը Համաձայնագրի Սփորագրման ամսաթվից հեփո հարյուր ութսուն (180) օր է:»*

Հաշվի առնելով վերոշարադրյալը և առաջնորդվելով «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով՝ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է համարում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը:

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**ՄՆԱՑԱԿԱՆ ՍԱՖԱՐՅԱՆ**